ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականը և քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման մասին տեղեկանքը տրամադրող մարմնի ղեկավարի ստորագրությամբ և հաստատված մարմնի կնիքով ուղարկվում է քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ նշված անձանց համացանցի www. e-citizen.am կայքում պաշտոնական, ինչպես նաև դիմողի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին: Դիմողի պահանջով տրվում է էլեկտրոնային փաստաթղթի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			արտատպումը (պատճենը):»		
2.	<< կառավարություն	Նախագիծը լրացնել նոր հոդվածով	Նախագծի 3-րդ հոդվածից հետո լրացնել 3.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ **Հոդված 3.1.** Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6. Քաղաքացիական կացության ակտի յուրաքանչյուր գրառում ստորագրվում է կատարող ՔԿԱԳ մարմնի աշխատողի ու ՔԿԱԳ մարմնի ղեկավարի կողմից և հաստատվում է ՔԿԱԳ մարմնի կնիքով: Քաղաքացիական կացության ակտի գրառումը ենթակա չէ տրամադրման, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի»: 1) 8-րդ մասում «կառավարություն» բառը փոխարինել «արդարադատության նախարարը» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	<< կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **Հոդված 5.** Օրենքի 9.1-ին հոդվածի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			3-րդ մասում՝ լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Միասնական գրանցամատյանում ձևավորվող բոլոր փաստաթղթերը ստորագրվում և կնքվում են էլեկտրոնային եղանակով»		
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ **Հոդված 6.** Օրենքի 9.1-ին հոդվածի 3-րդ մասում՝ լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Միասնական գրանցամատյանում ձևավորվող բոլոր փաստաթղթերը ստորագրվում և կնքվում են էլեկտրոնային եղանակով»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
5.	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 7-րդ հոդվածով	**Հոդված 7**. Օրենքի 9.2-րդ հոդվածում լրացնել 2-րդ և 3-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝ «2.Եթե դիմողը՝ տեսողական խանգարում ունեցող անձ է, ապա ՔԿԱԳ մարմնի աշխատակիցը բարձրաձայն ընթերցում է դիմումի բովանդակությունն ամբողջությամբ՝ առնվազն մեկ վկայի ներկայությամբ: Վկան դիմումի վրա ստորագրություն դնելու միջոցով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			հաստատում է իր ներկայությամբ դիմումի բովանդակությունը ՔԿԱԳ աշխատակցի կողմից ընթերցված և դիմողի համար պարզաբանված լինելու փաստը: 3. Սույն Օրենքով նախատեսված դիմումները կարող են ներկայացվել սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված մարմիններին՝ ըստ դիմողի նախընտրության»:		
6.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել է նոր 8-րդ հոդվածով	**Հոդված 8**. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 15-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
7.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել է նոր 9-րդ հոդվածով	**Հոդված 9**. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում՝ «պայմանագրի» բառից հետո լրացնել «և ԴՆԹ-ի (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) որոշման» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
8.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել է նոր 10-րդ հոդվածով	**Հոդված 10.** Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մաս ում՝ «պայմանագրի» բառից հետո լրացնել «և ԴՆԹ-ի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			(դեզօքսիռիբոնուկլեինաթթու) որոշման» բառերը:		
9.	<< կառավարություն	Նախագիծը լրացնել է նոր 11-րդ հոդվածով	**Հոդված 11.** Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝ «4. Ծննդի ակտային գրանցման մեջ, որպես երեխայի ծննդյան վայր, նշվում է երեխայի փաստացի ծննդյան վայրը կամ այն վայրը, որտեղ գտնվել է երեխան (մարզի, քաղաքային կամ գյուղական համայնքի անվանումը): 5. Եթե երեխան ծնվել է տրանսպորտային միջոցում՝ ուղերթի ընթացքում, ապա որպես երեխայի ծննդյան վայր, նշվում է երեխայի փաստացի ծննդյան վայրը: 6. Անձի ծննդյան ակտային գրանցման մեջ լրացվում են կյանքի ընթացքում այդ անձի վերաբերյալ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			կատարված բոլոր քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ տեղեկությունները»:		
10	ՀՀ **կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 12-րդ հոդվածով	**Հոդված 12**. Օրենքի 23-րդ հոդվածի հոդվածի «ե)» կետում «ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը:» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
11	ՀՀ **կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 13-րդ հոդվածով	**Հոդված 13**. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 25-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
12	ՀՀ **կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 14-րդ հոդվածով	**Հոդված 14**. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում «ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
13	ՀՀ **կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 15-րդ հոդվածով	**Հոդված 15**. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 32-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
14	ՀՀ	Նախագիծը լրացնել է նոր 16-րդ հոդվածով	**Հոդված 16**. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

	կառավարություն		«ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը» բառերը:		
15	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 17-րդ հոդվածով	**Հոդված 17**. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 40-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
16	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 18-րդ հոդվածով	**Հոդված 18**. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում «ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
17	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 19-րդ հոդվածով	**Հոդված 19**. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 49-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
18	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 20-րդ հոդվածով	**Հոդված 20**. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի «զ)» կետում «ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը:» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
19	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 21-րդ հոդվածով	**Հոդված 21**. Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Անվան փոխման պետական գրանցումը կատարվում է ՔԿԱԳ մարմնում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համաձայնությամբ:»		
20	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 22-րդ հոդվածով	**Հոդված 22**. Օրենքի 62-րդ հոդվածի «դ)» կետում «ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը:» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
21	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 23-րդ հոդվածով	**Հոդված 23**. Օրենքի 64-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2. Հայաստանի Հանրապետությունում գրանցվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Հայաստանի Հանրապետությունում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			մշտապես բնակվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում մահացած օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մահը»:		
22	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել է նոր 24-րդ հոդվածով	**Հոդված 24**. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 65-րդ հոդվածը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
23	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել է նոր 25-րդ հոդվածով	**Հոդված 25**. Օրենքի 67-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1. մասով. «2.1. ՔԿԱԳ մարմինը մահացած անձանց անձը հաստատող փաստաթղթերը մեկամսյա պարբերականությամբ փոխանցում է ՀՀ ոստիկանության լիազոր մարմին, իսկ մահացած զինծառայողների զինվորական գրքույկները՝ 15-օրյա	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			պարբերականությամբ համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներին:»:		
24	**<< կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 26-րդ հոդվածով	**Հոդված 26**. Օրենքի 68-րդ հոդված 1-ին մասի՝ 1) «ա)» կետում «և պատճառը» բառերը հանել. 2) «դ)» կետում «ժամանակը» բառից հետո լրացնել «և տրամադրող ՔԿԱԳ մարմնի անվանումը:» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

25	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 27-րդ հոդվածով	**Հոդված 27**. Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարվում է այն անձի դիմումի հիման վրա, ում վերաբերյալ կատարված է գրանցումը կամ նրա լիազորված անձի դիմումի հիման վրա:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
26	**ՀՀ կառավարություն**	Նախագիծը լրացնել է նոր 28-րդ հոդվածով	**Հոդված 28** . Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի 1-ից:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
27	**Աժ պատգամավոր Տարոն Սիմոնյան**	Նախագիծ	Համայնքային ենթակայության ՔԿԱԳ տարածքային մարմինները հանել համայնքային ենթակայությունից՝ կազմավորել մեկ միասնական կենտրոնական մարմին, որ կլինի ՀՀ Արդարադատության նախարարության կազմում:	**Ընդունվել է ի գիտություն**	**Ընդունվել է:**

28	**ԱԺ պատգամավոր Տարոն Սիմոնյան**	Նախագիծ	Նախագծում հաճախ է օգտագործվում «գրանցում» և «գրառում» բառերը միևնույն գործողությունը բնորոշելու համար: Անհրաժեշտ է օգտագործել մեկ տերմին իրավական որոշակիության հետ կապված խնդիրներ չառաջացնելու համար:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ, հստակեցվել է «գրանցում» և «գրառում գրանցման վերաբերյալ» հասկացությունները:	**Ընդունվել է:**
29	**ԱԺ պատգամավոր Տարոն Սիմոնյան**	Նախագծի 4-րդ հոդված	Հոդված 8-ի 7-րդ մասում «վկայականի» բառից հետո ավելացնել «, վկայականի կրկնօրինակի» բառերը, իսկ հոդված 9-ի 4-րդ մասը հանել՝ հաշվի առնելով օրենքի ծանրաբեռնվածության թեթևացման անհրաժեշտությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
30	**ԱԺ պատգամավոր Տարոն Սիմոնյան**	Նախագծի 11-րդ հոդված	Հոդված 22րդ-ի 5-րդ մասում վերաշարադրել հետրյալ կերպ՝ «Եթե երեխան ծնվել է տրանսպորտային միջոցում՝ ուղերթի ընթացքում, ապա որպես երեխայի ծննդյան վայր, նշվում է այն վայրը (մարզի, քաղաքային կամ գյուղական համայնքի անվանում), որտեղով ծննդյան պահին տեղաշարժվում է	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			այդ տրանսպորտային միջոցը, բացառությամբ օդային և ջրային տրանսպորտի համար օրենսդրությամբ սահմանված դեպքերի»:		
31	**Աժ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան**	Նախագծի 4-րդ հոդված	Հոդված 8-րդի 4-րդ մասից հանել «(տեղեկացման)» բառը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
32	**Աժ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան**	Նախագծի 26-րդ հոդված	Հոդված 68-րդի 1-ին մասի ա) կետում առաջարկվող փոփոխությունը հանել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**